

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

ՀՀ կառավարության ծրագրով՝ նախատեսված է գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի փոկոսադրույքների սուբսիդավորման ծավալի ավելացում:

ՀՀ 2015 թ. պետբյուջեով՝ գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի սուբսիդավորման նպատակով, հատկացվել է ավելի քան 290 մլն դրամով ավելի գումար, քան՝ նախորդ տարի, ինչը հնարավորություն է տալիս փոխարեն, հանրապետության բոլոր համայնքների համար կիրառել վարկերի փոկոսադրույքների 6 փոկոսային կտրի սուբսիդավորում: Տնտեսավարողների համար բարենպաստ պայմաններ ստեղծելու կառավարության որոշումները քաղաքականության իրագործման գործիքներից մեկը՝ գյուղացիական տնտեսություններին ցուցաբերվող պետական աջակցության ծավալի ավելացումն է, այդ թվում՝ տրամադրվող վարկերի փոկոսադրույքների սուբսիդավորման ավելացումը:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՈԼՈՐՏՈՒՄ

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն ընդունել է Ուրուգվայի «Նիրեա» ընկերության պարզապատկերային, որը գլխավորում էր կազմակերպության փոխնախագահ Գաստոն Սկայոլան:

Ողջունելով հյուրերին՝ նախարարը նշել է, որ Հայաստանի և Ուրուգվայի միջև գյուղատնտեսության բնագավառում առկա է համագործակցության մեծ ներուժ, որի արդյունավետ օգտագործման դեպքում, կարելի է հասնել զգալի հաջողությունների: Միաժամանակ նախարարը հույս է հայտնել, որ այս հանդիպումը հիմք կհանդիսանա առկա բացը լրացնելու և հայաստանյան ընկերությունների հետ նոր կապեր հաստատելու համար: «Ուրուգվայը գյուղատնտեսության ոլորտում ունի հարուստ փորձ, որը կարող է փոխանցել հայկական կողմին, ուստի մենք շահագրգռված ենք զարգացնել տնտեսական հարաբերությունները»,- նշել է նախարարը:

Որպես համագործակցության հնարավոր փորձերից՝ նախարարն առաջարկել է ուսումնասիրել Հայաստանում համարվող արտադրության կազմակերպման և տեղական ընկերություններում ժամա-



նակակից տեխնոլոգիաների ներդրման հարցերը: Ընկերության փոխնախագահ Գաստոն Սկայոլան տեղեկացրել է, որ 1962 թվականին հիմնադրված «Նիրեա» ընկերությունն այսօր Ուրուգվայում մասնաձեռքի արտադրության և արտահանման խոշորագույն ընկերությունների շարքում է, իսկ ոչխարի մսի արտադրության ծավալներով՝ այն երկրի առաջատարն է: Ըստ նրա՝

ընկերությունում բուծվող կենդանիները գենետիկորեն մոնոֆիլիցված օրգանիզմներ պարունակող կերային մշակաբույսերով չեն կերակրվում: Կողմերը համոզմունք են հայտնել, որ երկու երկրների արտադրողները կկարողանան փոխգործակցության շահավետ եզրեր գտնել՝ նպաստելով Հայաստանի և Ուրուգվայի միջև գյուղատնտեսության ոլորտում համագոր-

ծակցության աշխուժացմանը: Այնուհետև պարզապատկերային անդամները հանդիպել են տեղական մասնաձեռք արտադրող ընկերությունների ներկայացուցիչների հետ՝ համագործակցության կոնկրետ հնարավորությունները քննարկելու նպատակով: Պարզապատկերային անդամներն այնուհետև կայացրել են «Նաթֆուդ» և «Բեկոն» ընկերություններ:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՅ

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՐԶԵՐ ՀԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ



Գարնան գյուղատնտեսական աշխատանքներին ընդառաջ կազմակերպված մարզային խորհրդակցությունների շրջանակում, ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը աշխատանքային այց է կատարել Կոտայքի մարզ:

Խորհրդակցությանը ներկա էին մարզպետ Արամ Հարությունյանը, Զրային տնտեսության պետական կոմիտեի նախագահի ժամանակավոր պաշտոնակատար Գագիկ Խաչատրյանը, Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակի տնօրեն Գագիկ Խաչատրյանը, համայնքապետեր և այլ պաշտոնատար անձինք: Անդրադառնալով մարզում գյուղատնտեսության ոլորտի ընդհանուր վիճակին՝ նախարարը հատկապես կարևորել է վարելահողերի օգտագործման մակարդակի բարձրացման հարցը: 2014 թվականի օպերատիվ վրայներով՝ մարզում առկա 37765,8 հեկտար վարելահողերից մշակվել է ընդամենը 17064 հեկտարը (45.2%): Վարելահողերի օգտագործման մակարդակով մարզը հանրապետությունում զբաղեցնում է նախավերջին տեղը: «Վարելահողերի նպատակային օգտագործման մակարդակը բարձրացնելու համար, անհրաժեշտ է ակտիվորեն օգտվել պետական աջակցության ծրագրերից, ինչը, համոզված եմ, հնարավորություն կընձեռնի մարզում զգալի առաջընթաց ապահովել», - նշել է Սերգո Կարապետյանը:

ՆԱԽՈՐԴ ՏԱՐՎԱ ԱՄՓՈՓՈՒՄ ԵՎ ԳԱՐՆԱՆ ԸՆԴԱՌԱՋ

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը, գարնան գյուղատնտեսական աշխատանքների մեկնարկի հետ կապված, հերթական մարզային խորհրդակցությունն է անցկացրել Լոռու մարզում:



Խորհրդակցությանը մասնակցել են Լոռու մարզպետ Արթուր Նալբանդյանը, Զրային տնտեսության պետական կոմիտեի նախագահի ժամանակավոր պաշտոնակատար Գագիկ Խաչատրյանը, համայնքապետեր, ոլորտի պատասխանատուներ: Անդրադառնալով գյուղատնտեսության ոլորտում մարզում նախորդ տարվա ընթացքում արձանագրված արդյունքներին՝ նախարարը կարևորել է անասնապահության ճյուղում մթերատվության բարձրացման խնդրի լուծման ուղղությամբ ձեռնարկվելիք քայլերը: Նախարարի խոսքով՝ կատարված դրական աշխատանքներին զուգահեռ, անասնաբուծության բնագավառում դեռևս առկա են մի շարք չլուծված խնդիրներ: Մասնավորապես՝ անբավարար են օգտագործվում հեռագնա արտադրանքները. մարզում առկա 145.9 հազար հա արտադրանքներից օգտագործվում է միայն 40 %-ը: Նախարարն ընդգծել է, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից և Համաշխարհային բանկի աջակցությամբ, «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագրի շրջանակում, Լոռու

Կարգացրեք մյուս էջերում

Էջ 2 Գարնան ընդառաջ	Էջ 3 Պետական աջակցության ծրագրեր գյուղատնտեսության ոլորտում	Էջ 4 Մարզային նորություններ	Էջ 5,7 Մասնագետի խորհուրդ	Էջ 6 Ի նպաստ գյուղատնտեսության զարգացման	Էջ 7 Համայնքային կյանք	Էջ 8 Բույսերի աշխարհում
------------------------	--	--------------------------------	------------------------------	---	---------------------------	----------------------------

ԱՃԻՍԱՆՔԱՅԻՆ ԱՅՅ

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՐԶԵՐ

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ

Նախարարը հանգամանորեն ներկայացրել է ընթացիկ տարում իրականացվող պետական աջակցության ծրագրերը՝ ընդգծելով, որ այս տարի ևս գյուղացիական տնտեսություններին կարգավորվեն մարզային գներով պարարտանյութեր, դիզելային վառելիք և բարձր վերարտադրության սերմացու, ինչը կնպաստի հողերի օգտագործման արդյունավետության բարձրացմանը: Նախարարը նաև հայտնել է, որ կառավարությունը որոշում է ընդունել հողօգտագործողներին տրամադրվող վարկերի



սուբսիդավորումը ևս երկու տոկոսային կետով ավելացնելու մասին: Արդյունքում՝ գյուղացիական տնտեսություններին հնարավորություն կընձեռվի ձեռք բերել շուկայականից անհամեմատ ցածր՝ 8% տոկոսադրույքով վարկեր: Նախարարի խոսքով՝ վերջին տարիներին պետությունը հատկապես մեծ ուշադրություն է դարձնում ջերմոցային տնտեսությունների զարգացմանը, ինչը նույնպես մեծ նշանակություն ունի և դրականորեն է անդրադարձել մարզում գյուղատնտեսության աճի ցուցանիշների վրա: Եթե 2011 թվականի տվյալներով՝ հանրապետության տարածքում շահագործվում էր ընդամենը 145 հեկտար տնտեսվող ջերմոցային, որոնցից 1,9 հեկտարը՝ Կոտայքի մարզում, ապա այժմ ջերմոցային ընդհանուր տարածքը 763,62 հեկտարի է հասնում, որից 42,95 հեկտարը գտնվում է Կոտայքի մարզում: Նախարարն այս կապակցությամբ, նաև հայտնեց, որ կառավարությունն արդեն իսկ ընդունել է օրենսդրական փոփոխությունների մի նախագիծ, որի համաձայն, ջերմոցների կոնստրուկցիաների, ջերմոցային արտադրության մեջ օգտագործվող մի շարք ռեսուրսների՝ ինչպես ներմուծումը, այնպես էլ՝ ներքին շրջանառությունը կազմավորվեն ավելացված արժեքի հարկի վճարումից:

Խոսելով անասնապահական ոլորտում մարզի վերջին տարիներին հաջողությունների մասին՝ նախարարն անդրադարձել է «Հայաստանի Հանրապետությունում 2007-2015 թվականներին տրամադրված ֆինանսական զարգացման ծրագրի» շրջանակներում իրականացվող ծրագրի արդյունավետությանը, որի շրջանակում ներկրվում և փորձաքննվում են պայմաններով, տնտեսական և սոցիալական բնույթի տնտեսական և սոցիալական ծանաչում ունեցող կաթնատու՝ հոլշտին և կաթնամսատու՝ շվից և սիմենթալ ցեղերի տնտեսական և սոցիալական փորձաքննումը, ինչպես նաև այդ ցեղերի վերարտադրությունը կազմակերպելու միջոցով:

Նախարարը շեշտել է նաև խոշոր եղջերավոր կենդանիների արհեստական սերմնավորման միջոցառումների ընդլայնման կարևորությունը, ինչը թույլ կտա ոչ միայն ավելացնել գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակը, այլև բարձրացնել դրանց կաթնատվությունն ու մսատվությունը:

Անդրադառնալով հանրապետությունում իրականացվող «Գյուղատնտեսական կենդանիների պարավաստում» ծրագրին՝ նախարարը կարևորել է դրա շրջանակներում իրականացվող անասնապահական արտադրության կանխարգելիչ և ախտորոշիչ միջոցառումները՝ ընդգծելով, որ այս տարի ևս հանրապետության ողջ տարածքում անասնաբուժական միջոցառումները կիրականացվեն անվճար հիմունքներով:

Խորհրդակցության ավարտին՝ գյուղատնտեսության զարգացման գործում ունեցած նշանակալի ավանդի և բեղմնավոր աշխատանքի համար ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Գյուղատնտեսական նվաճումների համար» ոսկե մեդալով պարգևատրվեց Կոտայքի մարզի «Մավաս» Գրուպ ընկերության հիմնադիր, գործադիր տնօրեն Արմենակ Մկրտչյանը, իսկ ոլորտի մի խումբ այլ ներկայացուցիչների հանձնվեցին շնորհակալագրեր:

ՆԱԽՈՐԴ ՏԱՐՎԱ ԱՄՓՈՓՈՒՄ ԵՎ ԳԱՐՆԱՆՆ

ԸՆԴԱՌԱՋ

մարզի թվով 8 համայնքներում արդեն իսկ ստեղծվել են գյուղացիական կոոպերատիվներ, ինչը դրական նախադրյալ է ծրագրի երկրորդ բաղադրիչի ընձեռնած հնարավորություններից օգտվելու, և արտադրական ու վերամշակման նոր սարքավորումների ներդրման միջոցով, զգալիորեն բարելավելու արտադրությունը: «Պետությունն այս տարի նույնպես շարունակելու է օժանդակության ծրագրեր իրականացնել՝ հնարավորինս թեթևացնելով գյուղացիների հոգսը: Ընդ որում, մարզի վերջին կմեկնարկի վարկերի տրամադրման գործընթացը», - նշել է գյուղատնտեսության նախարարը:

Ըստ նախարարի՝ ընթացիկ տարում ոռոգման ջրի վարձավճարների ավելացում տեղի չի ունենա՝ անկախ էլեկտրաէներգիայի կամ գազի սակագների բարձրացումից:

Նախարարը գոհունակություն է հայտնել նախորդ տարի մարզում կազմակերպված մթերումների արդյունքներից՝ նշելով, որ 2013 թվականի համեմատությամբ, բանջարեղենի մթերումների ծավալները գրեթե կրկնապատկվել են, իսկ պտղի մթերումների ծավալներն աճել են 1.3 անգամ: Ընդհանուր առմամբ, 2014 թվականին մարզի տարածքում մթերվել է 185.9 տոննա պտուղ (ներառյալ չորացված մթերքների արտադրության ուղղված պտուղը) և 128.8 տոննա բանջարեղեն՝ 2013 թվականի 81.7 և 43.8 տոննայի դիմաց:

Խորհրդակցության ավարտին՝ գյուղատնտեսության զարգացման գործում ունեցած նշանակալի ավանդի և բեղմնավոր աշխատանքի համար, ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Գյուղատնտեսական նվաճումների համար» ոսկե մեդալով է պարգևատրվել Լոռու մարզի Մեծ Պարնի համայնքի ղեկավար Գագիկ Պալյանը, իսկ ոլորտի մի խումբ այլ ներկայացուցիչների հանձնվել են շնորհակալագրեր:

ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԱՆԴՐԱԳԱՐՁ ԱՆԱՆԱԲՈՒԹՅԱՆԸ

ՀՀ գյուղատնտեսության նախարարի առաջին տեղակալ Գրիշա Բաղդասյան այցելել է Տավուշի մարզ, մասնակցել «Գյուղատնտեսական կենդանիների պարավաստում» ծրագրի շրջանակում իրականացվող միջոցառումներին նվիրված հերթական խորհրդակցությանը:

Խորհրդակցության ընթացքում, մարզի պատասխանատուների հետ համատեղ, քննարկվել է պետական պարավերի շրջանակներում իրականացվող հակահամաճարակային միջոցառումների ընթացքը, ինչպես նաև անդրադարձ է կատարվել գյուղատնտեսական կենդանիների ձմեռման հետ կապված հարցերին:

Անդրադառնալով անասնաբուժական ծառայություններ մատուցելու վերաբերյալ պայմանագրերի կնքման գործընթացի կազմակերպմանը՝ Գրիշա Բաղդասյանը հայտնել է, որ 2015 թվականին հանրապետության ողջ տարածքում անասնաբուժական միջոցառումները կիրականացվեն անվճար հիմունքներով: Ըստ նրա՝ մարզում կայուն անասնաճարակային

իրավիճակը պահպանելու գործընթացն ապահովելու նպատակով, ՀՀ կառավարությունը պետական բյուջեի միջոցներից Տավուշի մարզին է հատկացրել շուրջ 25 մլն դրամի ախտորոշիչ, կանխարգելիչ և բուժիչ միջոցներ:

Գրիշա Բաղդասյանը նաև ցուցումներ է տվել մարզային կառույցի ներկայացուցիչներին և մարզի համայնքային անասնաբույժներին՝ հակահամաճարակային միջոցառումները ժամանակին և արդյունավետ իրականացնելու վերաբերյալ: Խորհրդակցության ընթացքում քննարկվել են նաև համայնքային անասնաբույժների վարձատրման խնդիրներին առնչվող հարցեր:

Հանդիպումից հետո փոխնախարարն այցելել է մարզի Լուսաձոր համայնքում գործող «Հիմնադրված» զարգացման հիմնադրամի տնօրենին փավարաբուժական ֆերմա և ծանոթացել ֆերմայում ներդրված ժամանակակից տեխնոլոգիաներին:

ՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը հիշեցնում է, որ բույսերի պաշտպանության միջոցների ներմուծումը երրորդ երկրներից ՀՀ տարածք իրականացվում է մեկանգամյա լիցենզիայի առկայության դեպքում՝ համաձայն «ՀՀ մաքսային տարածքով փոխադրման համար արգելված և սահմանափակումների ենթակա ապրանքների ցանկերը հաստատելու, լիազոր մարմիններ սահմանելու և ապրանքների արտահանման և (կամ) ներմուծման լիցենզիաների և թույլտվությունների տրամադրման շրջանակային կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի N 1524-Ն որոշման:

Գյուղատնտեսության ոլորտի մեջ մտնելու օրվանից: Բույսերի պաշտպանության միջոցների ներմուծման լիցենզիա ստանալու համար, համաձայն «Հայաստանի Հանրապետության տարածք երրորդ երկրներից արտաքին առևտրի ոլորտի ապրանքների միասնական ցանկում ներառված բույսերի պաշտպանության միջոցների (ԵՏՄ ԱՏԳ ԱՍ 3808), ներմուծման մեկանգամյա լիցենզիայի տրամադրման ընթացակարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին» ՀՀ գյուղատնտեսության նախարարի ս.թ. հունվարի 15-ի N 6-Ն հրամանի՝ անհրաժեշտ է ս.թ. փետրվարի 26-ից դիմել ՀՀ գյուղատնտեսության նախարարություն՝ ներկայացնելով հետևյալ փաստաթղթերն ու տեղեկությունները՝

1) լիցենզիա ստանալու մասին հայտ, որը ներառում է ապրանքի առանձին տեսակը կամ տեսակների ցանկը, որի համար հայցվում է լիցենզիան, իրավաբանական անձանց պետական գրանցման համարը,

2) հայտի էլեկտրոնային օրինակը,

3) լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման լիցենզիայի պատճենը, եթե գործունեության այդ տեսակը կապված է տվյալ ապրանքի շրջանառության հետ:

Իրավաբանական անձինք կամ անհատ ձեռնարկատերերը հայտի հետ միասին ներկայացնում են նաև պետական տուրքի վճարման անդորրագրի պատճենը կամ պետական վճարումների էլեկտրոնային համակարգի կողմից գենեացված անդորրագիրը կամ ծանուցման մեջ նշում են գենեացված անդորրագրի 20-նիշանոց ծածկագիրը:

Մանրամասն տեղեկությունների համար կարող եք դիմել ՀՀ ԳՆ «Լիցենզիայի կետրոն» գործակալություն՝ հետևյալ հեռախոսահամարով՝ 011 23-55-02:

ՊԵՏԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

«Հայաստանի Հանրապետությունում 2015 թվականի գարնանացանի համար գարու, եգիպտացորենի, առվույտի և կորնզանի արտադրության զարգացման» ծրագիր

«Հայաստանի Հանրապետությունում 2015 թվականի գարնանացանի համար գարու, եգիպտացորենի, առվույտի և կորնզանի արտադրության զարգացման» ծրագրի նպատակն է՝ հանրապետությունում գարնանացան գարու, եգիպտացորենի, առվույտի և կորնզանի ցանքատարածությունների ու համախառն բերքի ծավալների և գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների եկամուտների ավելացումը:

Ծրագրի շրջանակում, 2015 թվականի գարնանացանի աշխատանքների իրականացման գործում գյուղացիական տնտեսություններին աջակցություն ցուցաբերելու նպատակով, տրամադրվում է բարձր վերարտադրության սերմացու: Սերմացուն հողօգտագործողներին հատկացվում է պետության կողմից ձեռք բերված արժեքից ավելի ցածր գներով: Մասնավորապես՝ գարնանացան գարին տրամադրվում է 130, եգիպտացորենը՝ 350, առվույտը՝ 1500 և կորնզանը՝ 370 դրամով: Սերմացուն հատկացվում է 0,3 և ավելի հեկտար հողատարածք ունեցող տնտեսավարողներին: Առավելությունը տրվում է անասնապահությամբ և Հայաստանի Հանրապետության տավարաբուծության զարգացման ծրագրում ընդգրկված տնտեսավարողներին:

«ՀՀ հողօգտագործողներին մատչելի գնով ազոտական, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութի ձեռքբերման նպատակով պետական աջակցության» ծրագիր

«Հայաստանի Հանրապետության հողօգտագործողներին մատչելի գնով ազոտական, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութի ձեռքբերման նպատակով պետական աջակցության» ծրագրի նպատակը՝ Հայաստանի Հանրապետության մարզերի հողօգտագործողներին մատչելի գնով անհրաժեշտ պարարտանյութերի ձեռքբերման հարցում աջակցելն է, և հողերի արդյունավետ օգտագործման ու գյուղատնտեսական մթերքների արտադրության ծավալների ավելացման միջոցով գյուղացիական տնտեսությունների եկամուտների բարձրացմանը նպաստելը:

Ծրագրի շրջանակում պարարտանյութերը տրամադրվում են մատչելի գներով՝ 1 պարկ (50 կգ) ազոտական պարարտանյութը հողօգտագործողներին տրամադրվում է 6000, իսկ կալիումական և ֆոսֆորական պարարտանյութերը՝ 7000 դրամով: Պարարտանյութերը տրամադրվում են հողօգտագործողներին՝ էլեկտրով հողօգտագործողի կողմից փաստացի մշակվող հողատարածքի չափից: Ազոտական պարարտանյութն առաջարկվում է օգտագործել 1 հեկտարի համար մինչև 300 կգ չափաքանակով, ֆոսֆորական պարարտանյութը՝ 400 կգ և կալիումական պարարտանյութը՝ 150 կգ չափաքանակներով: Ազոտական պարարտանյութը յուրաքանչյուր հողօգտագործողի տրամադրվում է առավելագույնը 1 տոննա, իսկ ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերը՝ առանց սահմանափակման: Ծրագրի շրջանակում, պարարտանյութեր ձեռք բերելու նպատակով, հողօգտագործողները պետք է դիմեն համապատասխան գյուղապետարաններ:

«Հայաստանի Հանրապետությունում փավարաբուծության զարգացման» (2007-2015 թթ.) ծրագիր

«Հայաստանի Հանրապետությունում տավարաբուծության զարգացման» (2007-2015 թթ.) ծրագիրը նպատակ ունի որակապես բարելավել տավարաբուծության ուղղությամբ իրականացվող տոհմասելիցիոն աշխատանքները, աջակցել տոհմային տնտեսությունների ձևավորմանը, նպաստել գյուղատնտեսական կենդանիների մթերատվության բարձրացմանը և խթանել հայրենական սելեկցիայի արդյունքում ստեղծված «կովկասյան գորշ» ցեղի գենֆոնդի պահպանման գործընթացը:

Ծրագրի շրջանակում հանրապետություն են ներկրվում տոհմային բարձրարժեք կենդանիներ, որոնք տրամադրվում են տնտեսավարող սուբյեկտներին:

Ներկրված կենդանիները հատկացվում են տարածամկետ վճարման պայմանով՝ 4 տարի մարման ժամկետով: Ընդ որում՝ առաջին տարում տնտեսավարողը վճարվում է կենդանու արժեքի 10, 2-րդ տարում՝ 20, 3-րդ տարում՝ 30, 4-րդ տարում՝ 40 %-ը՝ ամբողջությամբ մարելով գումարը:

Կենդանիներ ձեռք բերելու համար շահառուները կարող են դիմել ՀՀ գյուղատնտեսության նախարարություն՝ ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը՝

- համապատասխան հայտ (դիմում)՝ նշելով ձեռք բերվող կենդանիների գլխաքանակը և ցեղատեսակը,
- տեղեկանք սեփականության կամ վարձակալության իրավունքով տնօրինվող անասնազոմի և հողատարածքների վերաբերյալ:

«ՀՀ հողօգտագործողներին 2015 թ. գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գներով դիզելային վառելանյութի ձեռքբերման նպատակով պետական աջակցության» ծրագիր

«Հայաստանի Հանրապետության հողօգտագործողներին 2015 թվականի գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գներով դիզելային վառելանյութի ձեռքբերման նպատակով պետական աջակցության» ծրագիրը նպատակ ունի Հայաստանի Հանրապետության մարզերի հողօգտագործողներին աջակցություն ցուցաբերել մատչելի գնով դիզելային վառելանյութի ձեռքբերման հարցում, նպաստել հողերի արդյունավետ օգտագործմանը, և գյուղատնտեսական մթերքների արտադրության ծավալների ավելացման միջոցով, գյուղացիական տնտեսությունների եկամուտների բարձրացմանը:

Ծրագրի շրջանակում դիզելային վառելանյութը հողօգտագործողներին տրամադրվում է 1 լիտրը 350 դրամ վաճառքի արժեքով, 1 հեկտարի համար՝ մինչև 200 լիտր նորմայով: Սահմանված առավելագույն քանակը 600 լիտր է:

Ծրագրի շրջանակում, դիզելային վառելիք ձեռք բերելու նպատակով, շահառուները պետք է դիմեն համապատասխան գյուղապետարաններ:

«Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի սուբսիդավորում»

«Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի սուբսիդավորման» կարգի համաձայն, Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում գյուղատնտեսության ոլորտի տնտեսավարողներին տրամադրվում են մատչելի տոկոսադրույքներով վարկեր:

Վարկերը տրամադրվել են առավելագույնը՝ 14 տոկոս փաստացի տոկոսադրույքով, որից՝ 4 տոկոսային կետը սուբսիդավորվել է պետության կողմից, իսկ հանրապետության առավել կարիքավոր 225 համայնքների վարկառուների դեպքում, սուբսիդավորվել է վարկի տոկոսադրույքի 6 տոկոսային կետը: Արդյունքում՝ վարկառուները հնարավորություն են ստացել ձեռք բերել շուկայականից անհամեմատ ցածր (համապատասխանաբար՝ 10 և 8 %) տոկոսադրույքով վարկեր: 2015 թվականից սկսած՝ սուբսիդավորումը իրականացվելու է 6 տոկոսին համարժեք մասով, և արդյունքում՝ տնտեսավարող վարկը ստանալու է փաստացի 8 % տոկոսադրույքով: Յուրաքանչյուր գյուղացիական տնտեսությանը տրամադրվող վարկի մայր գումարը կազմում է մինչև 3 միլիոն դրամ,

Վարկերը տրամադրվում են ՀՀ դրամով և մինչև 2 տարի մարման ժամկետով, Մայր գումարի և տոկոսների վճարման համար արտոնկալ ժամկետը վարկի տրամադրման պահից սահմանված է առավելագույն վեց ամիս (վարկի տոկոսների վճարման պարտականությունը վարկառուի մոտ առաջանում է վարկի տրամադրման պահից սկսած՝ վեց ամիս հետո):

Նշված կարգին համապատասխան, մինչ այժմ հիմնականում վարկավորում իրականացրել են հետևյալ բանկերը՝ ԱԿԲԱ Կրեդիտ Ագրիկոլ բանկ, Կոնվերս բանկ, Արդշինբանկ, Պրոկրեդիտ բանկ:

Վարկ ստանալու համար շահառուները կարող են դիմել վերոնշյալ բանկերին՝ ներկայացնելով համապատասխան գործունեության համար ծրագրի առաջարկ և բանկերի կողմից պահանջվող այլ անհրաժեշտ փաստաթղթեր:

ՊԱՐԱՐՏԱՑՄԱՆ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Պարարտանյութերը գյուղատնտեսական արտադրության բարձրացման հզոր միջոց են, այն դեպքում, երբ կիրառվում են որոշակի համակարգով, հաշվի առնելով յուրաքանչյուր մշակաբույսի պահանջն այս կամ այն սննդատարրերի նկատմամբ: Այս ամենի պատասխանը տալիս է ագրոքիմիական քարտեզը: Ցանկացած մշակաբույս մշակելիս՝ վեգետացիայի ընթացքում հողից վերցնում է 175-185 կգ սննդատարրեր՝ ազոտ, ֆոսֆոր, կալիում: Եթե ժամանակին այս սննդատարրերը հող չեն վերադարձվում, հողն աստիճանաբար աղքատանում է և բերքատվությունը նվազում:



սերում կուտակվում է մեծ քանակությամբ չվերամշակված ամիակ:

Շուրջ 20 - 25 տարի հանրապետություն չեն ներկրվել ֆոսֆորական և կալիումական պարարտանյութեր, որը չէր կարող բացասաբար չափազանցաբար խնայել հողերի բերրության, այնպես էլ՝ մշակաբույսերի բերքատվության վրա:

Վերջին 5-6 տարիներին հանրապետություն է ներկրվել միայն ազոտական պարարտանյութ, այն էլ սահմանափակ քանակներով՝ տարեկան 35-40 հազար տոննա:

Նախկինում հանրապետություն են ներկրվել տարեկան շուրջ 100-110 հազ. տոննա ազոտական, 110-120 հազ. տոննա ֆոսֆորական և 30-40 հազ. տոննա կալիումական պարարտանյութեր:

Այդ ժամանակահատվածում, յուրաքանչյուր տարի, ըստ մշակաբույսերի՝ հող են մտցվել, հեկտարի հաշվով, 300-400 կգ ազոտական, 350-450 կգ ֆոսֆորական և 50 - 150 կգ կալիումական պարարտանյութեր:

Այժմ, հայտնի պատճառներով, հանրապետության մշակովի հողերի շուրջ 70-80 %-ը թույլ է ապահովված ազոտ, ֆոսֆոր և կալիում սննդատարրերով, դա է պատճառը, որ շատ մշակաբույսերի բերքատվությունը իջել է նվազագույնի:

Հացահատիկի դեպքում, նման թույլ ապահովված հողում, կարելի է ստանալ 30-35 գ/հա, իսկ 60-65 գ/հա ստանալու համար, խորհուրդ ենք տալիս հողի հիմնական մշակման ժամանակ օգտագործել 350-450 կգ/հա ֆոսֆորական, 70-120 կգ կալիումական պարարտանյութեր: Ցանքսի ժամանակ տրվում է 60-80 կգ/հա ազոտական պարարտանյութ, իսկ մնացած 240 - 270 կգ-ը՝ վեգետացիայի ընթացքում:

Նույն սխեման կարող եք օգտագործել ցանկացած մշակաբույսերի մշակության ժամանակ:

Մանրամասների համար դիմեք՝ ք. Երևան Ծով. Իսկուլի պող. 22^ա, հեռ. 77-29-06, 77-49-84, E-mail: agrocarayutyun@mail.ru

Վաչագան Դավթյան
«Ագրոքիմիական ծառայություն»
ՊՈԱԿ-ի տնօրեն

ՏԱՎՈՒՇ

ԸՆԴԱՐՁԱԿՎՈՒՄ ԵՆ ԱՅԳԵՏԱՐԱԾՔՆԵՐԸ

«Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ԾՎԿ» շրջանակներում, ընթացիկ տարում, Տավուշի մարզում նախատեսվում է 50 հեկտարի վրա հիմնել պտղատու այգի: Տնկվելու են հիմնականում դեղձենի, ընկուզենի, նեկտարիտիների, սալորենի և կեռասենի ծառատեսակները:

Դեռևս 2013 թ. գարնանը ավանդաբար այգեգործությամբ զբաղվող Արճիս գյուղում հիմնվել են 4,5 հա դեղձի և նեկարիտի, իսկ Պտղավան համայնքում, 10 հեկտարի վրա, ավարտվել են սալորենու և կեռասենու այգիների հիմնման նախապատրաստական աշխատանքները: Մարզպետարանի գյուղատն-

տեսության և բնապահպանության վարչության պետ Վաղարշակ Սուքոյանի տեղեկացմամբ, նոր այգիների հիմնման նպատակով, ուսումնասիրվում և ճշտվում է այլ համայնքներում ևս 40 հա հողատարածքների հատկացման հարցը:

Տավուշ համայնքում «Աղետների նախապատրաստվածության և ռիսկերի նվազեցման ազգային կարողությունների հզորացման ծրագրով», 4500 քմ մակերեսով խաղողի այգիների վրա տեղադրվել են հակակարկտային ցանցեր: «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հաստատանյան մասնաճյուղը իրականացրել է «ՀՀ Տավուշի մարզի Դիտավան և Պառավաքար համայնքներում խաղողի այգիների վրա հակակարկտային ցանցերի տեղադրում» ծրագիրը՝ 2,114,141 դրամ ընդհանուր

արժողությամբ, (յուրաքանչյուր համայնքում՝ 3000 քմ մակերեսով):

ՕԶՍՎԱՍ Հայաստանի կողմից Տավուշի մարզում իրականացված «Կայուն կենսաապահովման» ծրագրի շրջանակներում, Սևքար համայնքում դեռևս 2013թ. ստեղծվել է սառնարանային տնտեսություն՝ թարմ մրգի և բանջարեղենի պահպանման համար, ինչպես նաև ջերմոցային համայնքային տնտեսություն՝ սոցիալական ձեռնարկությունը: Այրում համայնքում, 2014թ. հիմնվել է վերամշակող «Միրգ» ՍՊԸ: Ջերմոցային տնտեսություններ են ստեղծվել նաև Ակնաղբյուրում, Ն. Ծաղկավանում, Հաղթանակում, Լճկածորում, Աջաջրում և Սարիգյուղում: 2015թ. ջերմոցային տնտեսություններ կհիմնվեն նաև՝ Արճիս, Պտղավան, Կողբ և Դիտավան համայնքներում:

ԱՐԱՐԱՏ

ԱՎԵԼԱՑԵԼ ԵՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԸ

Արարատի մարզում 2014 թ.-ին արտադրված գյուղատնտեսական մթերքների ծավալը, 2013 թ. ցուցանիշը գերազանցել է 10,8 %-ով: Համեմատության համար նշենք, որ 2013 թ.-ին արտադրված գյուղատնտեսական մթերքների ծավալը 2012 թ.-ի ցուցանիշից ավելի էր 5,7 %-ով:

Մարզի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Հայկազ Տերտերյանի կարծիքով, աճը պայմանավորված է մարզում ցանքատարածքների ավելացումով. այսպես՝ եթե 2013 թ.-ին մարզում մշակվել է 21526 հա գյուղատնտեսական նշանակության հողատարածք, ապա 2014 թ. այդ թիվը հասել է 22983 հեկտարի (աճը՝ 6,8 %): Անցած տարի կատարվել է 5779 հա աշխատանք՝ 2013 թ.-ի 5227 հեկտարի փոխարեն (ավելացել է՝ 8,6%-ով):



2014 թ.-ին շեշտակիորեն ավելացել են նաև անասնապահական ծագման մթերքների արտադրության ծավալները. արտադրվել է 11700 տոննա միս՝ 2013 թ.-ի 9800 տոննայի փոխարեն, արտադրված կաթը՝ 40100 տոննա, 3300 տոննայով գերազանցել է 2013 թ.-ի ցուցանիշը: Բարձր ցուցանիշներ են արձանագրվել նաև ձվի արտադրության բնագավառում. 59 մլն հատ ձու՝ նախորդ տարվա 54,7 մլն-ի փոխարեն:

Ինչ վերաբերում է դաշտավարությանն ու այգեգործությանը, ապա այստեղ ևս արդյունքները գոհացուցիչ են. հացահատիկի և հատիկաղնդեղենի բերքը 2013 թ. ցուցանիշը գերազանցել է 32,1, կարտոֆիլինը՝ 7,8, բանջարեղենինը՝ 11,4, բոստանային մշակաբույսերինը՝ 25,6 %-ով: Ավելի քան 20900 տոննայով ավելացել են պտղի և 7900 տոննայով՝ խաղողի արտադրության ծավալները:

ԳԵՂԱՐՔՈՒՄԻՔ

ՀԱՄԱԼՐՎԵԼ Ե ՄԵՔԵՆԱՏՐԱԿՏՈՐԱՅԻՆ ՀԱՎԱՔԱԿԱՅԱՆԸ

«ՀՀ Գեղարքունիքի մարզը գյուղատնտեսության ոլորտում զգալի ձեռքբերումներով եզրափակեց 2014 թվականը: Բավական է նշել, որ գյուղատնտեսության տարեկան համախառն արտադրանքը հասել է 188,6 միլիարդ դրամի, որը 7 %-ով գերազանցում է նախորդ տարվա մակարդակը»,- ասում է ՀՀ Գեղարքունիքի մարզի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Վանիկ Հովհաննիսյանը:

Մարզում հաջողությամբ է իրականացվում ՀՀ կառավարության «ՀՀ-ում, 2010-2014 թթ. սերմնաբուծության և սերմարտադրության զարգացման ծրագիրը», որի շնորհիվ 2014 թ.-ին հացահատիկի համախառն արտադրանքը հասել է 141 հազար տոննայի, իսկ հեկտարի միջին բերքատվությունը կազմել է 32 ցենտներ:

Մարզի համայնքներում կատարվել է շուրջ 20 հազար հեկտար աշխատանքային ցորենի ցանք, որը զգալիորեն ավելի է նախորդ տարվանից: Հացահատիկային մշակաբույսերի արտադրության ծա-

վալները 2013 թ.-ի ցուցանիշները գերազանցել են 16403, կարտոֆիլինը՝ 55185, բանջարեղենինը՝ 1775 տոննայով:

Գյուղատնտեսական աշխատանքների ոլորտի նպատակով, «Գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագրի շրջանակներում, մարզի 20 համայնքներ ձեռք են բերել 51 անվավոր տրակտոր, 31 միավոր հակավորող սարքավորում, 174 գյուղատնտեսական գործիքներ, ջրարբիացվել են 15000 հա արոտավայրեր:

«Փոքր և միջին ձեռնարկատիրության» զարգացման ազգային կենտրոնի «Գյուղական համայնքների զարգացման ծրագրի» շրջանակներում, մարզի 5 համայնքներ ձեռք են բերել 5 «Բելառուս» տրակտոր և գյուղատնտեսական գործիքներ:

Վանիկ Հովհաննիսյանը նշեց, որ մեքենատրակտորային պարկի թարմացման համար, մարզին անհրաժեշտ է 20 անվավոր տրակտոր, 4 հացահատիկահավաք կոմբայն և 12 հակավորող սարքավորում:

ԼՈՌԻ

ԲԱՐԵԼԱԿՎԵԼ Ե ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՀՀ Լոռու մարզում, 2014 թ. պետական բյուջեի միջոցներով, վերանորոգվել են Այրում-Ճոճկան, Շնող-1, Ճոճկան-1 և Ճոճկան-2 պոմպակայանները: Աշխատանքների իրականացման համար պետբյուջեից հատկացվել է շուրջ 12 մլն դրամ:

ԱՄՆ-ի ՄԶԳ-ի ֆինանսավորմամբ և «Հայաստանի Ֆուլեր տնաշինական կենտրոն» ԲՀԿ-ի կողմից, «Գյուղի զարգացման արդի նախաձեռնություն» ծրագրի շրջանակներում, վերակառուցվել է Մեծ Այրում համայնքի ոռոգման ներքին ցանցից 2466 մ երկարությամբ տեղամաս: Ծինարարական աշխատանքների իրականացման համար կատարվել է շուրջ 12 մլն դրամի ներդրում: Մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Գրիգոր Հակոբյանի տեղեկացմամբ, Շնող համայնքի ոռոգման ներքին ցանցից կատարվել է ջրանցքի 5130 մ երկարությամբ տեղամասի կիսախողովակների վերանորոգում, որի համար ներդրվել է շուրջ 9 մլն դրամ:

Հակահեղեղային աշխատանքների ծրագրի շրջանակներում, «Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից իրականացվող «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցակցության» ծրագրի շնորհիվ, կատարվել են Աթանի ջրարբիացված արոտները համայնքի հետ կապող միակ հանգույց հանդիսացող «Քիլիսալու» կոչվող կամրջի հիմնանորոգման-նախագծման աշխատանքները:

«Պարբերաբար կատարվել են ուսումնասիրություններ «Գետիկ» և «Լոռու ջրանցք» ՋՕԸ-ների գործունեության վերաբերյալ՝ հետևելով ոռոգման համակարգերի նպատակային և արդյունավետ օգտագործմանը»,- հավելում է Գրիգոր Հակոբյանը: Բացի այդ, արդեն կատարվել են գարնանային հնարավոր ջրհեղեղներից, հեղեղումներից և սելավներից, գյուղատնտեսական ցանքատարածությունները պաշտպանելու նպատակով, մարզի գետերի, հեղեղատարների և սելավատարների առավել վտանգավոր տեղամասերի ուսումնասիրման աշխատանքները: Կազմվել է կանխարգելիչ միջոցառումների պլան:

ԿՈՏԱՅՔ

ՆԱԽԱՊԱՏՐԱԿՏՎՈՒՄ ԵՆ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ

«Կոտայքի մարզում 2014 թ. կատարվել է 17061 հա գյուղատնտեսական մշակաբույսերի ցանք (որից աշխատանքային՝ 5704 հա, գարնանացան՝ 11357 հա): Օգտագործվել է վարելահողերի 45,2 %-ը՝ նախորդ տարվա 44,5 %-ի դիմաց: Ի դեպ, նախորդ տարվա համեմատությամբ, ցանքատարածություններն ավելացել են 229 հեկտարով»,- նշում է մարզի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Միեր Եղիազարյանը:

2014 թվականի գյուղատնտեսական աշխատանքներն իրականացնելու նպատակով, պետական աջակցության ծրագրի շրջանակներում, կառավարության կողմից մարզին հատկացվել է 1548 տոննա ազոտական, 25,5 տոննա կալիումական, 38,5 տոննա ֆոսֆորական պարարտանյութ, 77,65 տոննա գարնանացան գարու, 1954 կգ առվույտի սերմացու և 312000 լիտր դիզելային վառելանյութ: Այդ ծրագրից օգտվել են մարզի 54 համայնքների շուրջ 6000

աշխատանքներ: Նույն ծրագրի շրջանակներում, մարզին հատկացվել է 258,24 կգ ցինկի ֆոսֆատ թունանյութ, որի միջոցով համայնքներում, 2152 հեկտարի վրա մկների դեմ կատարվել են պայքարի աշխատանքներ:

Վարչության տվյալներով՝ 2014 թվականին մարզում կատարվել է 6144 հա աշխատանքային ցանք, որը՝ նախորդ տարվա համեմատ, ավելի է 430 հա-ով: Ինչ վերաբերում է 2015թ. գյուղատնտեսական տարվա նախապատրաստական աշխատանքների իրականացմանն, ապա, Միեր Եղիազարյանի տեղեկացմամբ, այդ նպատակով արդեն մարզի բոլոր համայնքներից պահանջարկի վերաբերյալ հավաքագրվել են հայտեր և ամփոփ ձևով ներկայացվել ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը:

Ընթացիկ տարում նախատեսված է կատարել 11900 հա գարնանացան մշակաբույսերի ցանք, որը նախորդ տարվանից ավել կլինի 470 հեկտարով:

Մարզային նյութերը՝ Նելլի Սահակյանի

ՄԱՍՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԳ

ԽԱՂՈՂԻ ԷՏ ԵՎ ԱՅԳԻՆԵՐԻ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆ

Խաղողի այգիներում գարնանային մշակության հիմնական աշխատանքներն են՝ այգեբացը, շախտակի վերանորոգումը, բաց տեղերի լրացումը, վազերի էտն ու ձևավորումը, այգու միջշարքերից արքադի հեռացումը, չոր կապը, հողի մշակությունը, պարարտացումը, ոռոգումը, պայքարը հիվանդությունների և վնասատուների դեմ, առաջին շվատումը, առաջին սնուցումը, առաջին կանաչ կապը և այլն:

Այգեթաղ կատարող խաղողագործական շրջաններում խնամքի աշխատանքները սկսվում են այգեբացից: Այգեբաց կատարելիս, անհրաժեշտ է վազի վրայից հողը զգուշությամբ հեռացնել այնպես, որ վազերի օրգանների հետ շփվող գործիքները չվնասեն թևերին, մատերին և աչքերին: Դրանից հետո, մակերեսային արմատները հեռացնելու համար, թափված հողը հավասարաչափ փռում են միջշարքային տարածություններում՝ վազերի բունը բացելով 10-15 սմ խորությամբ:

Ուսումնասիրությունները հավաստում են, որ Արարատյան հարթավայրի այգիները կարելի է բացել մարտի առաջին տասնօրյակից, իսկ Լախաբանային գոտում՝ երկրորդ կամ երրորդ տասնօրյակից:

Վազերն Էտելիս, պետք է հեռացնել խիստ ձգված, վնասված, թուլացած թևերը, ենթաթևերը: Դրանց փոխարեն, բնի մոտ գտնվող մատերից կամ հոռամատերից կազմավորվում են շարքից դուրս եկած թևերին և այլ մասերին փոխարինողներ, իսկ անդալիսի միջոցով վերացվում է այգու նորությունը:

Էտը հաջող կատարելու, Էտված վազերից բարձր բերք ստանալու համար կարևոր նշանակություն ունի կատարման ժամանակը, որը հիմնականում կախված է տվյալ շրջանի հողակլիմայական պայմաններից: Այգեթաղ չկատարող խաղողագործական շրջաններում, որտեղ ձմեռը մեղմ է, վազերը կարելի է Էտել աշնանը՝ տեղաթափից 15-20 օր անց և, երբեմն էլ՝ ձմռանը:

խտությամբ տնկված շախտակային այգիներում, Սսխալի, Արարատի, Շահումյանի, Երևանի դեղին և նման սորտերի վազերն Էտելիս, թողնել 80-120, Ոսկեհատ, Գառան Դմակ, Ճիլար, Անահիտ, Ռջաժիթելի, Արենի և նման սորտերի վրա՝ 60-100, Կախեթ, Նագելի, Գաթանակ, Կարմրահյուս և նման սորտերի վրա՝ 40-60 աչք:

Յուսիսարևելյան շրջաններում 2.0 x 1.25 մ խտությամբ տնկված այգիների յուրաքանչյուր վազի վրա պետք է թողնել հետևյալ բեռնվածությունը՝ Ռջաժիթելի, Կաթեռնե, Սափերավի, Ջրջրուկ, Կարմրահյուս սորտերինը՝ 40-50 աչք, Լալվարի, Բանանց, Բուլղար, Կարդինալ սորտերի վազերի վրա՝ 55-65 աչք, իսկ Ալիգոսե, Պիտ սև և նման թույլ աճեցողությամբ մյուս սորտերի վրա՝ 20-30 աչք:

Մեղրու շրջանի խիտ տնկված այգիներում (1,5x1,0 մ), Արևիկ և Ալդարա սորտերի յուրաքանչյուր վազի վրա պետք է թողնել 3-4 մատ՝ Էտելով 8-10 աչք երկարությամբ, այն հաշվով, որ բեռնվածությունը կազմի 30-40 աչք:

Էտի երկարությունը վազերի աճի և բերքատվության կարգավորման հիմնական ազդեցություններից է:

Կիրառվում են էտի երկարության հետևյալ ձևերը՝ կարճ էտ՝ երբ մատի վրա թողնում են 14 աչք, միջակ էտ՝ 7-10 աչք, երկար էտ՝ 12 և ավելի աչք:

Գոյություն ունի նաև խառը էտ, երբ վազի վրա թողնվող մատերի մի մասն Էտվում է կարճ, մյուս մասը՝ միջակ, մնացածը՝ երկար: Համեմատաբար լայն կիրառում ունի խառը էտը: Կարճ էտ կիրառվում է գլխավորապես ֆիլոքսերադիմացկուն մայրակների վազերի վրա: Բոլոր տիպի ձևավորումների ժամանակ փոխարինող մատերը ևս կարճ են Էտվում (2-3 աչք):

Կարճ, միջակ և խառը էտը կիրառվում է թմբային այգիներում: Այդ դեպքում՝ վազի բնի վրա, տարբեր ուղղություններով դասավորված թևերի կամ ենթաթևերի վրա պետք է թողնել 2-4 մատ՝ յուրաքանչյուրն Էտելով 4-7 աչքով:

Նագելին, Կախեթը և նմանատիպ աճեցողություն ունեցող սորտերը, անհրաժեշտ է Էտել 4-5 աչքով, Ոսկեհատը՝ 5-6, իսկ Արարատի, Սսխալի, Կարմիր Կախանի, Երևանի դեղին, Վարդագույն Երևանի և այս կարգի մյուս սորտերը՝ 5-7 աչքով:



Այգեբացն անհրաժեշտ է սկսել նախ՝ հարավային լանջերում, իսկ այնուհետև՝ հարթավայրերում և ցածրադիր մասերում հիմնադրված այգիներից: Խորհուրդ է տրվում այգեբացի և շախտակի վերանորոգման աշխատանքներն ավարտել սեղմ ժամկետներում, որպեսզի վազերի էտն ու չոր կապն իրականացվեն մինչև աչքերի ուռչելը:

Վազերի էտն այգու մշակության շատ կարևոր և բարդ ազդեցություն ունեցող միջոցառումներից է, որի հիմնական նպատակն է՝ կանոնավորել վազի տվյալ և հետագա տարիների բնական աճը, պտղաբերությունը և բերքի որակը:

Էտի ժամանակ կազմվում են որոշակի քանակությամբ բերքի օղակներ: Բերքի օղակը կազմված է լինում մեկ փոխարինողից և մեկ կամ մի քանի բերքատու մատերից: Սովորաբար, բերքի օղակը կազմվում է նախորդ տարվա փոխարինողի վրա:

Ձմռան ընթացքում վազերը պետք է Էտել, երբ ջերմաստիճանը 0 °C-ից բարձր է: Ձմռանը միամյա մատերը մեկ-երկու աչքով ավելի երկար պետք է Էտել:

Էտի ժամանակ վազի բեռնվածությունը՝ դրա վրա թողնված աչքերի, իսկ շվատումից հետո՝ շվերի և ծաղկաբույլերի քանակն է: Վազի բեռնվածության չափը կախված է հողակլիմայական պայմաններից, մշակվող սորտերի կենսաբանական առանձնահատկություններից, կիրառվող ազդեցություններից, պլանավորվող բերքից, վազերի կոնկրետ վիճակից: Արարատյան հարթավայրի և նրա նախալեռնային շրջանների խաղողի այգիներում մեկ հեկտարի բեռնվածությունը պետք է կազմի 150-250 հազար, իսկ Յուսիս-արևելյան գոտում՝ 80-160 հազար աչք:

Արարատյան հարթավայրի և դրա նախալեռնային գոտու շրջաններում, 2,5 x 1,5 մ

ՀԻՐԱԿ

Համայնքային կենտրոնը գործում է մեծ ծանրաբեռնվածությամբ

Անցած տարեվերջին Շիրակի մարզի Արևշատ համայնքում մեծ շուքով բացվեց «Առաքելություն և մանկություն» ֆրանսիական բարեգործական կազմակերպության հովանավորությամբ հիմնադրված ու կահավորված համայնքային կենտրոնը:

Գեղեցիկ ու բարեկարգված երկհարկանի կենտրոնում տեղակայված են գյուղապետարանը, բուժկետը, գրադարանը, ինչպես նաև՝ արվեստի ու արհեստի դպրոցը, ուր երգ ու պարի, նկարչության, քանդակագործության, կար ու ձևի, շախմատի, առաջին բուժօգնության, համակարգչային դասարաններում արտադպրոցական կրթությամբ զբաղված են՝ ինչպես Արևշատի, այնպես էլ՝ հարևան համայնքների երեխաներ:

Համայնք կատարած այցի ժամանակ, Արևշատի գյուղապետ Սայադ Խաչատրյանի ուղեկցությամբ, եղանք կենտրոնի դասասենյակներում, ծանոթացանք աշխատանքներին, ինչպես նաև հետաքրքրվեցինք այս տարի համայնքում նախատեսվելիք ծրագրերով:

Նախ նշեմ, որ կենտրոնը, հիրավի, հիասքանչ նվեր էր բոլոր արևշատցիների համար: Կենտրոնում հիմնված դպրոցը մեծ պահանջարկ ունի երեխաների շրջանում, իսկ առաջին բուժօգնության դասընթացներին անգամ այցելում են երիտասարդ մայրիկները, ովքեր փորձառու մասնագետից միշտ ինչ-որ նոր բան են սովորում: Պետք է ասել նաև, որ թե՛ դպրոցի ուսման վարձը, և թե՛ ուսուցիչների վճարը տալիս են հենց իրենք՝ սովորողները: Ուսուցիչները մեր գյուղից են, կան նաև հարևան համայնքներից հրավիրված մասնագետներ», - ասաց պարոն Խաչատրյանը: - Իսկ ինչ վերաբերում է ծրագրերին, ապա կառանձնացնեի «ՀԱՅԱՆՏԱՌ» ՊՈԱԿ-ի հետ համատեղ հզոր անտառաշերտի հիմնման նախագիծը, որն անպայման կյանքի կկոչվի, և երեք հեկտարի վրա կունենանք բնական անտառ՝ իր 3500 ծառերով: Ծառ են կարևորում նաև ակումբի հանդիսությունների դահլիճի նորոգման ծրագիրը, որի արդյունքում՝ կունենանք հանդիսավոր միջոցառումների համար պայմարեցված դահլիճ: Գյուղում կշարունակվեն նաև խմելու և ոռոգման ջրազծերի նորոգման աշխատանքները, իսկ մեծ թափով գործող սպառողական կոոպերատիվի ծրագրի շրջանակներում ձեռք բերված 7 գյուղգործիքներն ու 2 նոր տրակտորները մեծ օգնություն են գյուղացիների համար:

Արևշատում գործող համայնքային կենտրոնը ևս մեկ ապացույց է, որ համայնքի և գյուղապետի նպատակադրված աշխատանքի շնորհիվ, կարելի է կյանքի կոչել ցանկացած ծրագիր: Վստահ ենք, որ նախատեսված ծրագրերը ևս իրականություն կդառնան:

Շիրակի ԳԱՄԿ

ԾՐԱԳԻՐ

ԽՄԲԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ ԿՈՏԱՅՔԻ ԳԱՄԿ-ՈՒՄ

Վերջերս Կոտայքի ԳԱՄԿ-ում Գյուղատնտեսության զարգացման միջազգային ֆինանսորման (ԳՉՄԳ) և Գլոբալ Էկոլոգիական հիմնադրամի (ԳԷԳ) հետ համատեղ, տեղի ունեցավ «Հայաստանում արտադրողականության աճին ուղղված հողերի կայուն կառավարում» ծրագրով խմբակային քննարկում: Ծրագիրը ներկայացնում էին IPM Research ընկերության աշխատակիցները:

Ծրագրի հիմնական նպատակը՝ Հայաստանում մրգերի տեսակների և ընկուզավորների մշակման, առևտրային ներուժի, խնդիրների, ռիսկերի վերաբերյալ գյուղացիական տնտեսությամբ զբաղվող թիրախային անձանց կարծիքների հավաքագրումն էր: Ծրագիրը կիրականացվի հանրապետության 3 մարզերում:

Խմբակային քննարկմանը ներկա էին Կոտայքի ԳԱՄԿ-ի մասնագիտական խումբը՝ ի դեմս գործադիր տնօրեն Արտակ Խալաթյանի, ԳԱՄԿ-ի գյուղատնտեսության գծով խորհրդատուները, հիմնադրամի կողմից նախօրոք ընտրված համայնքներից շահագրգիռ ֆերմերներ, ովքեր ունեին պտղատու այգիներ: Վերջիններս աճեցնում էին 1 կամ մի քանի պտղատեսակներ: Ընդգրկված մասնակիցների այգիները սեփական ուժերով խնամելու առնվազն ,5 տարվա փորձ ունեցող անձիք էին:

Քննարկումն իր մեջ ներառում էր կոնկրետ հարցեր՝ ուղղված ֆերմերներին, որը հնարավորություն կտար ստանալու դրամաշնորհային ծրագրերի ֆինանսավորում՝ արտահանման, կլիմայի փոփոխության, սառնարանային տնտեսություններ հիմնելու, կենսաբազմազանության, հողերի անապատացումը կանխելու, թունաքիմիկատների կառավարման, նաև՝ գյուղատնտեսական այլ ծրագրեր իրականացնելու համար:

Մեկնարկի ընթացքում ֆերմերները հանդես եկան իրենց առանձին առաջարկություններով՝ նշելով մշակության ընթացքում հանդիպած դժվարություններ և առավելություններ մասին: Ամփոփելով խմբակային քննարկումը՝ ֆերմերները պատրաստակամություն հայտնեցին մասնակցել առաջնային ծրագրային առաջարկների կազմմանը, ինչպես նաև՝ իրենց ներդրումն ունենալ բանակցային աշխատանքների արդյունավետ կազմակերպման գործում:

Միաժամանակ նշվեց, որ նմանատիպ հանդիպումներն ունենում են արդյունավետ շարունակականություն ապահովող հիմքեր:

Նարինե Անդրեասյան Կոտայքի ԳԱՄԿ

Ի ՆՊԱՍՏ ԳՅՈՒՂԱՏՆԵՍՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՅՄԱՆ

ԳՅՈՒՂԱՏՆԵՍՈՒԹՅՈՒՆՆ ԾՐԱԳՐՈՒՄ Ե

«Չնայած որոշ խնդիրների առկայությանը, այնուամենայնիվ, մեր հանրապետությունում գյուղատնտեսությունն օրեօր զարգանում է», - ասում է «ՀիմնաՏավուշ» Չարգացման Հիմնադրամի արտահղության և կոմերցիոն գծով տնօրեն Ռոբերտ Նավասարդյանը, ով կազմակերպությունում աշխատում է ստեղծման օրվանից:



Ֆրանսիայի Հայկական Հիմնադրամի և Օ-դը-Սեն վարչական շրջանի գլխավոր խորհրդի նախագահությամբ, դեռևս 2011 թ.-ին ստեղծված «ՀիմնաՏավուշ» Չարգացման Հիմնադրամի ծրագրերն ու նպատակները հոգեհարազատ էին Ռոբերտ Նավասարդյանին, ով անմիջապես ձեռնամուխ եղավ գյուղատնտեսության բնագավառում ունեցած իր երկարամյա փորձը ներդրել՝ ի նպաստ տրաստեղծ կազմակերպության կայացմանը: Հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրի նպատակը՝ Տավուշի մարզում բուսաբուծական և անասնապահական արտադրության ոլորտների զարգացումն է, որը նպաստում է գյուղական բնակչության կենսամակարդակի բարձրացմանը, արտագաղթի սահմանափակմանը, ֆերմերների եկամուտների ավելացմանը: Ստեղծման առաջին իսկ տարում Լուսաձոր համայնքում հիմնվել է տոհմային տնտեսություն, 2014թ.-ին՝ մինի ֆերմաներ են կառուցվել Գոշ և Գանձաքար համայնքներում: Իսկ ընթացիկ տարում ավարտին կհասցվի Լույսատիպ ֆերմաների կառուցումը Բարեկամավան և Արծվաբերդ գյուղերում: Թվարկված ծրագրերի իրականացման գործում իր մեծ ներդրումն ունի Ռոբերտ Նավասարդյանը, ում աշխատանքը բարձր է գնահատվել ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից՝ նրան արժանացնելով «Գյուղատնտեսական նվաճումների համար» ոսկե մեդալի:

«Աշխատելով գյուղատնտեսության ոլորտում, ինձ քաջ հայտնի են առկա խնդիրները: Շատ եմ կարևորում տոհմային կենդանիների ներմուծումը, ինչը և իրականացնում է մեր կազմակերպությունը: Այդպիսով, հնարավոր կլինի զարգացնել անասնապահության ոլորտը», - նշում է մեդալակիրը:

Հիմնադրամի կողմից մարզի 13 համայնքների հատկացվել է 10 հազար հատ արքայանարնջի, 25 համայնքի՝ 8 հազար խաղողի արմատակալ, իսկ մի շարք գյուղերում վերականգնվել է ոռոգման համակարգը: Ռոբերտ Նավասարդյանը նոր ծրագրերի մասին է խորհում...

ՀԱՃԵԼԻ ԱՆԱԿՆԿԱԼ

«Գյուղատնտեսությունն ամենածանր ու դժվարություններով լի բնագավառներից է: Դժվարությունը նախևառաջ կայանում է նրանում, որ այդ բնագավառում խնդիրներ են առաջանում կլիմայական պայմանների պատճառով», - ասում է Սյունիքի մարզի «Էլեն-Արփինե» ՍՊԸ-ի տնօրեն Գառնիկ Շալունցը, ով գյուղատնտեսության զարգացման գործում ունեցած նշանակալի ավանդի, բեղմնավոր աշխատանքի և գյուղատնտեսական նվաճումների համար պարգևատրվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարության ոսկե մեդալով:

Գառնիկ Շալունցը մասնագիտությամբ անասնաբույժ է: Երևանի Անասնաբուծական-անասնաբուծական ինստիտուտն ավարտելուց հետո, ստացել է գիտական անասնաբույժի որակավորում: Իրադարձություններով լի ու հարուստ է պարոն Շալունցի անցած ճանապարհը: Աշխատանքային գործունեությունը սկսել է Գորիսի «Ավանգարդ» սովխոզից, այնուհետև շարունակել արդեն սեփականաշնորհված ԳԿՏ-ում, որտեղ ընտրվել է նախագահ: 2000 թ.-ին կազմակերպությունը, թոռների անունով, վերանվանվել է «Էլեն-Արփինե», որը ղեկավարում է մինչ օրս: Անասնաբուծության գծով մասնագիտացված ընկերությունը զուգահեռաբար զբաղվում է նաև դաշտավարությամբ: Եվ այդ ամենն իր գործը սիրող ղեկավարի խստապահանջ ու հետևողական աշխատանքի արդյունքն է: «Ցավոք, քչերն են ցանկություն հայտնում աշխատել գյուղատնտեսության ոլորտում: Մինչդեռ գյուղին այսօր նվիրյալներ են հարկավոր», - նշում է Շալունցը:



Հանրապետության գյուղատնտեսության բնագավառում առկա հաջողությունները, ըստ պարոն Շալունցի, պայմանավորված են պետական օժանդակության ծրագրի իրականացումով, որի շրջանակում գյուղացին, մատչելի գնով, ձեռք է բերում պարարտանյութ և դիզելային վառելանյութ:

«Ոսկե մեդալին արժանանալն ինձ հաճելի անակնկալի բերեց: Շուրջ եմ՝ նման պատվի արժանանալու համար: Ընդհանրապես, որ գնահատել եք իմ աշխատանքը», - հավելում է մեդալակիրը:



Ի դեպ, նրա ղեկավարած տնտեսությունն ունի 124 հա վառելահող և 120 հա արոտավայր, որոնք օգտագործվում են նպատակային և արդյունավետ:

Նելլի Սահակյան

ՄԱՍՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

5 ԽԱՂՈՂԻ ԷՏ ԵՎ ԱՅԳԻՆԵՐԻ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆ

Բոլոր դեպքերում՝ ծայրամասում գտնվող կամ ուժեղ մատը պետք է ետել 1-2 աչքով ավելի երկար, քան՝ ներքևի մասում գտնվող կամ թույլ մատը:

Շպալերայի վրա բարձրացված այգիներում էտը պետք է կատարել համեմատաբար երկար՝ բերքատու մատի և փոխարինողի սկզբունքով: Ուժեղ աճեցողություն ունեցող սորտերի (Արարատի, Երևանի դեղին, Թավրիզենի, Մսխալի և այլն) բերքատու մատերը պետք է ետել 10-12 աչքով, իսկ թույլ աճեցողություն ունեցող սորտերինը (Նագելի, Կախեթ, Ալիգոտե)՝ 6-8 աչքով:

Լավ զարգացած վագերի բարձր բեռնվածությունն ապահովելու համար, յուրաքանչյուր բերքի օղակի վրա, մեկի փոխարեն, կարելի է թողնել երկու, իսկ առանձին դեպքերում նաև՝ երեք բերքատու մատ և մեկ փոխարինող:

Էտը և արքայի տեղափոխումն ավարտելուց հետո, պետք է սկսել չոր կապը: Վագի թևերը, ենթաթևերը և բերքատու մատերը կապել առաջին և

երկրորդ հարկ լարերից:

Անկախ ձևավորման համակարգից, շպալերային այգիներում վագերի բերքատու մատերը լարերին կապել աղեղնաձև, երբեմն՝ հորիզոնական դիրքով: Չոր կապի լավագույն ժամկետ է համարվում հյութաշարժության սկզբից մինչև աչքերի ուռչելը: Չոր կապի ժամանակ թևերը, ենթաթևերը և բերքատու մատերն այնպես պետք է դասավորել, որ շպալերայի հարթության վրա հավասարաչափ տեղավորվեն և խտացումներ չլինեն: Կապն ուժեղ չձգել, քանի որ աճեցողության ընթացքում, բազմամյա ճյուղավորումներն ու միամյա մատերը հաստանում են: Այդ պատճառով՝ կապը հարկավոր է կատարել միայն ութաձև և փոքր-ինչ ազատ: Թմբային այգիներում չոր և կանաչ կապ չեն կատարում, այլ վագերը նեցուկավորում են:

Չոր կապից հետո այգիների միջշարքային տարածությունները պետք է վարել 20-25 սմ, իսկ միջվագայինը՝ փո-

րել 18-20 սմ խորությամբ:

Հանքային և օրգանական պարարտանյութերը հող են մտցվում 2-3 ակոսներով՝ 25-30 սմ խորությամբ: Ամեն տարի, հեկտարի հաշվով, պետք է տալ 100-120 կգ ազոտ, 110-120 կգ ֆոսֆոր և 80-100 կգ կալիում (ազոտը կալիումի հաշվով): Օրգանական պարարտանյութերով պարարտացնելիս, հեկտարին պետք է տալ 30-40 տ կիսափտած գոմաղբ կամ 46 տոննա կիսափտած թռչնաղբ՝ երեք տարվա հաշվով:

Թմբային այգիներում, որտեղ հողի մշակությունը կատարվում է ձեռքով, այգեփորը պետք է կատարել 25-27 սմ խորությամբ: Թմբային այգիները պարարտացնելիս, անհրաժեշտ է գարնանը, վագից 50-60 սմ հեռավորության վրա, բացել 30-35 սմ խորությամբ 4-5 փոս, դրանց մեջ լցնել պարարտանյութի խառնուրդը և հողով ծածկել: Հողի մշակումից և պարարտացումից հետո այգին խնամքով ջրել և աշխատանքներն ավարտել՝ մինչև աչքերի ուռչելը:

Մայիս ամսին, ծաղկումից 15-20 օր առաջ, տրվում է առաջին սնուցումը, ազոտ՝ 30-35 կգ, ֆոսֆոր՝ 20-25 կգ, կալիում՝ 15-20 կգ (ազոտը կալիումի հաշվով):

Ծաղկումից առաջ, երբ շվերն ունենում են 10-12 սմ երկարություն և դրանց վրա նկատելի են ծաղկափթթություններ, պետք է կատարել առաջին շվատումը: Շպալերային այգիներում, անկախ վագին տրված ձևավորման համակարգից, շվերը, աճմանը զուգընթաց, պետք է կապել լարերից: Առաջին կապը կատարում են ծաղկումից առաջ, երբ շվերն անցնում են երկրորդ հարկ լարից: Կանաչ շվերը պետք է կապել ութաձև, առանձին-առանձին, ուղղահայաց դիրքով՝ հավասարաչափ դասավորելով շպալերայի հարթության վրա:

Գ. Մեյյան, գյուղատնտեսական գիտությունների թեկնածու, Խաղողագտնողային գործության գիտական կենտրոն

ՄԱՍՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ԿԱՂԱՄԲԱԶԳԻՆՆԵՐԻ ԲՈՒԺԻՉ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սպիտակագլուխ կաղամբ

Ղեռ վաղ ժամանակներում ժողովրդական բժշկությունը գտնում էր, որ կաղամբը բարձրացնում է օրգանիզմի դիմադրողականությունը տարբեր հիվանդությունների նկատմամբ, վերացնում է անբնությունը և հանգստացնում գլխացավը: Մանրացված և թթվեցրած կաղամբը դյուրինացնում է կյուբափոխանակությունը, կանխարգելում է ցինգա հիվանդությունը, լուծողական է համարվում փորկապության ժամանակ, իսկ ջրգողության համար՝ միզամուղ է (խմել տաք վիճակում՝ 1 բաժակ ուտելուց առաջ կամ հետո): Կաղամբի հյութը շաքարավազի հետ խառնած խորհուրդ են տալիս օգտագործել հազի համար, իսկ կաղամբի տերևները՝ սալջարդի ժամանակ: Էկզեմայի համար տերևները եռացրել են կաթի մեջ և դրել վնասված հատվածին: Կաղամբի հյութը խառնելով հում ձվի սպիտակուցի հետ օգտագործել են այրվածքների, թարախակալված վերքերի և խոցերի դեպքում:

Ժամանակակից բժշկությունը կաղամբը օգտագործում է՝ որպես պոլիվիտամին, շաքարային դիաբետի, աթերոսկլերոզի դեպքում: Համարվում է միզամուղ, ստամոքսաաղիքային տրակտի գործունեության կարգավորիչ, օգտագործվում է շնչառական ուղիների բորբոքումների ժամանակ: Համարվում է հակաճառագայթային և հակաքաղցկեղային միջոց: Հատկապես օգտակար է կաղամբի թարմ հյութը, որում առկա է մեծ քանակությամբ ասկորբիցին, որը 50 անգամ շատ է, քան՝ կարոտինոլը:

Կարմրագլուխ կաղամբ

Այս բույսը համարում են «հրաշք» բույս: Ի տարբերություն սպիտակագլուխ կաղամբի, այն պարունակում է 2 անգամ ավելի վիտամին C և 4 անգամ ավելի կարոտին: Այս կաղամբը պարունակում է անտոցիանոլներ և ֆլավոնոլիգնոլներ, որոնք կանխարգելում է բորբոքային, քաղցկեղային գործընթացների և տուբերկուլյոզի զարգացումը, ինչպես նաև կարգավորում են անոթների էլաստիկությունը: Թարմ հյութը բուժում է թոքերի հիվանդությունը: Խորհուրդ է տրվում օգտագործել հազի, քնկոտության, փորկապության ժամանակ (1 թեյի գդակ՝ օրը 3-4 անգամ): Միևնույն ժամանակ այն պարունակում է դժվարամարս թաղանթանյութ և աղետամոքսային համակարգի հիվանդության ժամանակ օգտագործվում է քիչ քանակությամբ:

Ծաղկակաղամբ

Պարունակելով մեծ քանակությամբ վիտամիններ՝ հատկապես վիտամին B, C, այն դյուրին յուրացվում է օրգանիզմի կողմից և համարվում է դիետիկ և մանկական հիանալի սնունդ: Ծաղկակաղամբը ակտիվացնում է մտավոր գործունեությունը և օրգանիզմը պահպանում է ներվային սթրեսներից:

Բրոկոլի

Կաղամբը վիտամիններով հարուստ, չափազանց օգտակար և քիչ կալորիականությամբ (100 գրամի մեջ՝ 30

կկալ) բանջարեղեն է: Այն պարունակում է վիտամիններ՝ C, B, PP, K, U (հակախոցային), բետա-կարոտին (A նախավիտամին, որը գեղեցկության և լավ տեսողության աղբյուր է), ասկորբինաթթու: C վիտամինը նրանում մի քանի անգամ ավելի շատ է, քան՝ ցիտրուսային օրեն մրգի մեջ: Բրոկոլին նաև հանքային կալցիում է պարունակում: Կալիումի, կալցիումի, ֆոսֆորի, նատրիումի, երկաթի պարունակությամբ այն մրցակցում է գունավոր կաղամբի հետ՝ գերազանցելով հանքային աղերի և սպիտակուցների քանակությամբ:

Ֆիզիոլոգիական ակտիվ կյուբերի քանակության շնորհիվ, բրոկոլին խորհուրդ է տրվում սրտի անբավարարություն, նյարդային համակարգի խանգարում ունեցող մարդկանց: Բրոկոլիի մեջ ընդգծված է մեծ քանակը հրաշալի ազդեցություն ունի արյան բաղադրության վրա: Բրիտանացի գիտնականների ուսումնասիրությամբ՝ բրոկոլին նվազեցնում է շագանակագեղձի քաղցկեղի ռիսկայնությունը: Պարզվել է, որ նրանում եղած կյուբերը կարող են ակտիվացնել և մեկուսացնել հակաքաղցկեղային գեները, որոնք կարող են չարորակ ուռուցքների զարգացման պատճառ դառնալ: Բրոկոլին պաշտպանում է հնարավոր ինֆարկտից, լավացնում է սրտի աշխատանքը: Ամերիկացի գիտնականները առևտրային վրա փորձարկել են բրոկոլին և պարզել, որ ամենօրյա օգտագործման դեպքում նրանց սիրտը, ևույնիսկ, թթվածնի անբավարարության պայմաններում, հրաշալի է աշխատել: Դա բացատրել են բրոկոլիի մեջ եղած այնպիսի կյուբերի քանակով, որոնք խթանում են օրգանիզմում հատուկ սպիտակուցների առաջացումը:

Լավագույն ազդեցություն ունենում է գոլորշու վրա շոգեխաշած բրոկոլին: Երկար խաշելիս՝ օգտակար հատկությունները կորչում են: Բրոկոլին նաև որոշակիորեն չեզոքացնում է ծխախոտի՝ թոքերի վրա ունեցած վատ ազդեցությունը: Դրանում պարունակվող սուլֆորաֆանը նվազեցնում է նաև շաքարախտի ֆոնի վրա առաջացող սիրտ-անոթային հիվանդությունների հավանականությունը: Բրոկոլիի մեջ այս կյուբի քանակությունն ամենաշատն է:

Բրիտանացի գիտնականները նաև համոզված են, որ շաքարախտի դեպքում ևս չափազանց օգտակար է բրոկոլին ամենօրյա սննդակարգում ընդգրկելը: Շաքարախտ, ինչպես հայտնի է, հինգ անգամ մեծացնում է սիրտ-անոթային հիվանդությունների հավանականությունը, քանի որ արյան մեջ գլյուկոզային մեծ քանակությունից վնասվում են անոթները: Հետազոտությունները ցույց են տվել, որ սուլֆորաֆանը, օրգանիզմում ընթացող կենսաքիմիական ռեակցիաների դեպքում, խթանում է կատալիզատորի դեր կատարող էնզիմի՝ հատուկ սպիտակուցների առաջացումը, որոնք արյունատար համակարգը պաշտպանում են և նվազեցնում անոթների համար քայքայիչ մոլեկուլների քանակը: Բրոկոլիի, մասնավորապես՝ սուլֆորաֆանի շնորհիվ, հնարավոր է կանխել կրծքի քաղցկեղի հնարավոր զարգացումը:

Իմունային համակարգի ամրապնդման համար խորհուրդ է տրվում ամեն օր բրոկոլիի թարմ հյութ խմել: Այս բույսը նաև հակացեյտոլիտային հատկություն ունի: Այն



հաճախ պետք է օգտագործել թարմ վիճակում: Եփելու ընթացքում բրոկոլիի մեջ եղած սուլֆորաֆանը և մնացած օգտակար կյուբերը նվազում են: Բրոկոլին, սուլֆորաֆանի մեծ քանակության շնորհիվ, հակամիկրոբային հատկություն ունի: ԱՄՆ սննդի ինստիտուտի տվյալներով՝ բրոկոլիի ամենօրյա օգտագործումը օգնում է օրգանիզմին պայքարել չարորակ երևույթների, վիրուսների դեմ:

Բրյուսեյան կաղամբ

Պարունակելով մեծ քանակությամբ սպիտակուցներ և վիտամիններ՝ A, B₁, B₂, B₃, B₉, C, E, որոնք 2 անգամ շատ են, քան՝ կիտրոնի կամ նարնջի և բավականին շատ քան կիվիի մեջ, այն բարձրացնում է օրգանիզմի դիմադրողականությունն ու աշխատունակությունը: Բրյուսեյան կաղամբը, որպես դիետիկ մթերք, առաջարկվում է օգտագործել սիրտ-անոթային հիվանդությունների դեպքում: Բրյուսեյան կաղամբը պարունակում է մեծ քանակությամբ հակաբորբոքիչ կյուբեր, որոնք խթանում են վերքերի բուժմանը: Հյութը նպաստում է ենթաստամոքսային գեղձի ֆունկցիայի վերականգնմանը: Շատ օգտակար է շաքարային դիաբետի ժամանակ:

Կոլրաբի

Կոլրաբիին անվանում են հյուսիսային կիտրոն, քանի որ նրանում ավելի շատ վիտամին C կա, քան՝ ցիտրուսներում: Պարունակելով մեծ քանակությամբ Ca և K՝ համարվում է հիմնական հումք մարդու կմախքի և ատամների կազմավորման համար, ուստի այն օգտակար սնունդ է հատկապես՝ մանուկների և ծերերի համար: Կոլրաբին վերացնում է օրգանիզմի այտուցվածությունը, օրգանիզմից դուրս է բերում ավելորդ խոլեստերինի քանակությունն ու թունավոր կյուբերը: Սա սրտի հիվանդության բուժման միակ գրավականն է:

Պեկինյան կաղամբ

Պարունակում է մեծ քանակությամբ Fe, Ca և K, վիտամիններ A, C, B, PP, E, U: Օրգանիզմի կողմից հեշտ է մարսվում, վերացնում է այտուցները, նպաստում է նի-հարեցմանը: Բարձրացնում է օրգանիզմի դիմադրողականությունը, կարգավորում արյան ճնշումը, վերացնում աթերոսկլերոզը:

Կյուբը տրամադրել է՝ Լաուրա Թադևոսյանը Բանջարաբուստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոն, գյուղատնտեսական գիտությունների թեկնածու Մշակումը՝ ԳԱՀԿ-ի

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ

ԿԱՐԵՎՈՐՎՈՒՄ Է ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ՍՏԵՂՃՈՒՄԸ

ՀՀ Լոռու մարզի Լեռնոսկրային գյուղի բնակչության 80%-ն ազգությամբ ռուսներ են, 15%-ը՝ հայեր, 5%-ը՝ եզդիներ: Այրում են հաշտ ու համերաշխ՝ հարգելով միմյանց ազգային սովորույթներն ու ավանդույթները:

Հողագործությամբ զբաղվող գյուղացիական փոփոխությունները հիմնականում մշակում են կաղամբ, կարփոֆիլ, բազուն և գազար: Տարիների ընթացքում, ձեռք բերած փորձի շնորհիվ, ավանդաբար բարձր բերք են ստանում: Սակայն, 2014թ. երկու անգամ տեղացած կարկառու հարուստի հեղաշրջումը, զգալիորեն կրճատվեց բերքաբերությունը: Տուժեցին ոչ միայն կաղամբի, այլ նաև՝ կարփոֆիլի ցանքաբերածքները: Թեև գյուղացին կաղամբի սածիլների վերափոխել կարարեց, այնուամենայնիվ արդյունքներն այնքան էլ գոհացուցիչ չէին, քանի որ ժամկետն արդեն ուշացած էր: Փոխարենը՝ բարձր բերք են ապահովել կերային մշակաբույսերի ցանքաբար-

րածքները: Սպառված անասնակերը գյուղատնտեսական կենդանիներին կբավարարի մինչև գարնան ավարտը: Լեռնոսկրայինում ավելի շատ բուծում են խոշոր եղջերավոր կենդանիներ, մասնավորապես՝ կովեր: Մանր եղջերավոր կենդանիների գլխաքանակը հասնում է 150-ի: Արտադրարների հարուստ բուսածածկի շնորհիվ, այսօր արտադրվում է համային բարձր հատկանիշներով կաթ, որից էլ պարրաստվում են պանիր, յուղ և այլ մթերքներ: Արտադրված կաթի մի մասն էլ (օրական 2-2,5 տոննա) առաքվում է գյուղից 13 կմ հեռավորության վրա գտնվող Վանաձոր քաղաք: Լեռնոսկրայինում կաթի իրացման խնդիր չկա, քանի որ որակյալ կաթի գերակշռող մասը մթերում է հարևան Մարգահովիտ գյուղի «Վարդանուշ» ՍՊԸ-ն: Ընդհանրապես, Լեռնոսկրայինում արտադրված բոլոր փեսակի գյուղատնտեսական մթերքների 80%-ն իրացվում է Վանաձորում, մնացածը, մեծ խմբա-



քանակներով, առևտրային կազմակերպություններն ու անհատները գնում և տեղափոխում են այլ մարզեր: Համայնքի մեծագույն հիմնախնդիրը՝ երիտասարդության համար աշխատատեղերի բացակայությունն է: «Որպեսզի գյուղը զարգանա, երիտասարդությունը պետք է իրեն հեղափոխի աշխատանք ունենա: Ներկայումս նրանք զբաղված են միայն գյուղատնտեսական աշխատանքներով, որը ընդամենը կարիքները բավարարելու համար, անհրաժեշտ եկամուտ է ապահովում: Աշխատատեղերի ստեղծումը հույս կարևոր է:

Եթե մեզ մոտ էլ, ինչպես հանրապետության մյուս համայնքներում, ձևավորվեն կոոպերատիվներ, երիտասարդությունն անպայման կընդգրկվի վերջինիս աշխատանքներում», - ասում է գյուղապետ Էդիկ Չախալյանը: Այս օրերին գյուղում ընթանում են գարնան նախապարաստական աշխատանքներ: Պեպական աջակցության ծրագրի շրջանակներում, գյուղացին մարզելի գնով ձեռք է բերում դիզվառելիք և պարարտանյութ, ինչը՝ պարուն Չախալյանի գնահատմամբ, մեծ օգնություն է գյուղացուն:

Ինչ վերաբերում է 2015թ. ծրագրերին, ապա գյուղապետի տեղեկացմամբ՝ համայնքի բյուջեի միջոցներով, առաջնահերթ պետք է վերանորոգվի խմելու ջրի ջրաբարձ: Բոլոր ծրագրերն էլ նպատակաուղղված են գյուղում կյանքն ավելի բարեկեցիկ և հաճելի դարձնելուն: Բնությունը պարզել է շոպյուրեն, իսկ խելամիտ գործունեությամբ մարդը կարող է ավելի անել:

Նելլի Սահակյան

ՀԵՏԱԲՈՒՆԻՐ Է...

ԿԱՐԿԱԴԵ

Կարկադեով թեյի սրույզ փարիքը պարզել հնարավոր է, սակայն հայտնի է, որ այն Հին Եգիպտոսում բարձր էր գնահատվում ու միայն փարավոնների վայել ըմպելիք էր համարվում: Այդ փառահեղ վառ-սուրակագույն, հաճելի համով ըմպելիքը ոչ միայն հագեցնում է ծարավը, թարմացնում շոգին, այլև օժտված է բազում օգտակար հատկություններով:



ԻՆՉ Է ԿԱՐԿԱԴԵՆ

Հիբիսկուսը կամ սուդանյան վարդը, ռոզելան՝ մեզ հայտնի չինական վարդը, տուղտագգինների ըտանիքին պատկանող բույս է, որի հայրենիքը Եգիպտոսն է: Այդ երկրի պլանտացիաներում աճեցված թեյն ամենաբարձրորակն է համարվում: Կարկադեի տերևները, արմատները, ցողունը, մի խոսքով, բոլոր հատվածներն օգտակար են: Սակայն թեյի համար օգտագործվում են միայն բույսի ծաղիկները, ավելի սրույզ՝ ծաղկաբաժակը:

Ծաղիկների կյանքը շատ կարճ է. առավոտյան բացված ծաղիկը կեսօրին արդեն թռչում է, ու մնում է միայն ծաղկաբաժակը, որն օրեցօր ավելի գունեղ է դառնում, խոշորանում, հյութեղանում՝ վերածվելով պտղի, որը սակայն չեն թողնում հասունանա, պոկում են ու հատուկ պայմաններում չորացնում:

Կարկադեի թեյը հարուստ է կենսաբանական ակտիվ նյութերով, մանավանդ՝ օրգանական թթուներով: Դրանք էական ազդեցություն են ունենում ըմպելիքի համի ու հատկությունների վրա: Կարկադեի թեյը պարունակում է գլիկոզիդներ ու պեկտիններ, միկրոտարրեր, վիտամիններ, որոնք փոխազդում են կենսաբանորեն ակտիվ այլ նյութերի հետ:

ԿԱՐԿԱԴԵԻ ՕԳՏԱԿԱՐ ԲԱՂԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ Ըմպելիքը թթվաշ հաճելի

համ է ստանում կիտրոնա-, խնձորա և գինեթթուների շորհիվ: Անտոցիանի խտույթունն ըմպելիքին վառ կարմիր գույն ու հականեխիչ հատկություն է հաղորդում:

Բացի այդ, նվազեցնում է սիրտ-անոթային հիվանդությունների վտանգը, բարելավում դիմադրողականությունը:

Ո՞ՒՄ Է ՑՈՒՑԱԾ ԿԱՐԿԱԴԵՆ

Պարզվում է՝ բոլորին: Այդ հաճելի ըմպելիքը վերադարձնում է

ուժն ու առողջությունը՝ բարձր ջերմության, գերհոգնածության, ցածր ու թույլ իմունիտետի դեպքում: Պետք է հաշվի առնել, որ կարկադեով տաք ու սառը թեյերը միանգամայն տարբեր ազդեցություն են ունենում զարկերակային արյան ճնշման պարագայում: Տաք թեյը նպաստում է արյան ճնշման բարձրացմանը, օգնում երիկամներն ու յարդը խարամներից մաքրելուն, հրաշալի հանգստացնող միջոց է: Տաք թեյը հաճախ մրսածության ժամանակ է գործածվում, օգնում է անքնությունը հաղթահարելուն: Սառը թեյը նպաստում է արյան ճնշման իջեցնելուն, խթանում է մարսողությունն ու ակտիվացնում ենթաստամոքսային գեղձի աշխատանքը, ամրացնում անոթների պատերը:

Այս թեյի կանոնավոր գործածությունը կօգնի ազատվելու նաև ավելորդ քաշից. կարկադեի մեջ շաքարի յուրացումը դանդաղեցնող ու ածխաջրերի յուրացումը բարելավող նյութեր կան: Սակայն, ասվածից չի կարելի եզրակացնել, որ կարկադեի թեյը համադարման է: Օրական առաջարկվում է խմել մինչև 2-3 բաժակ թեյ, այն էլ՝ մյուս սննդամթերքների կիրառության դեպքում:

ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Է ԸՆՏՐԵԼ ԿԱՐԿԱԴԵՆ

Նախ, ինչպես և թեյախոտը, նախապատվությունը պետք է տալ խոշորաթերթ տե-

սակին, ուշադրություն պետք է դարձնել դրա փաթեթավորման ամսաթվին, քանի որ կարկադեի պահպանման առավելագույն ժամկետը 3 տարի է:

Եգիպտոսում վաճառվում է 2 տեսակի կարկադե՝ շատ խոշոր՝ Հարավային Եգիպտոսից ու Սուդանից, և ավելի մանր, որը որակով զիջում է եգիպտականին: Կարկադեով թեյը մեզ մոտ թրմում ենք սովորական թեյախոտի պես. խոտի վրա եռման ջուր ենք լցնում ու մի քանի րոպե թողնում, իսկ Եգիպտոսում կարկադեն եռացնում են:

ԻՆՉ ԿԱՐԵԼԻ Է ՊԱՏՐԱՍՏԵԼ ԿԱՐԿԱԴԵԻՑ

Կարկադեով ըմպելիքը հրաշալի հումք է ոչ ակոհոլային հյութերի պատրաստման համար: Այդ նպատակով օգտագործվում են համեմունքներ՝ մեխակ, դարչին, կոճապղպեղ, հիլ, իսկ թթվությունը կտրելու նպատակով՝ մեղր կամ շաքար: Ցանկության դեպքում կարելի է նաև մրգեր ու հատապտուղներ ավելացնել, շատ ներդաշնակ են ցիտրուսայինները:

Կարկադեի սերմերը Գվինեայում գործածում են որպես հանգստացնող միջոց, Ֆիլիպիններում բույսի դառը արմատը տապակում են, մաքրում ու գործածում՝ որպես ախորժակը խթանող միջոց, իսկ Անգոլայում բույսի տերևների թանձր հյութով վերքեր են բուժում: Շատ երկրներում թարմ տերևները սննդի մեջ գործածում՝ շոգեխաշում են սոխի հետ: Հիբիսկուսի վլացած տերևները հազարատերևով աղցանների մեջ են ավելացնում՝ թթվաշություն հաղորդելու համար: Եվ, վերջապես, հիբիսկուսը գործածվում է՝ որպես բնական գունանյութ. կարկադեի եփուկով կարելի է Ջատկի ձվերը ներկել՝ կարմիր ու նաև կապույտ: Իսկ արդեն գործածված տերևները կարելի է կիրառել՝ որպես հումուս՝ հողը պարարտացնելու համար:

Կ Ա Թ Ն Բ Ե Կ

Աստղածաղկավորների ընտանիքին պատկանող խոտաբույս է: Տարբերում են կաթնբեկի դաշտային, անհարթ և բանջարանոցային տեսակները:

Հետաքրքիր է, որ բույսի գերմաներեն անվանումը համահունչ է հայերենին: Կաթնբեկը երկիր մոլորակի վրա աճող հնագույն բույսերից է և եզակի է նաև այն պատճառով, որ տարածված է և՛ Հարավային, և՛ Հյուսիսային կիսագնդերում: Աճում է գրեթե ամենուր ՎՎ նախալեռնային և լեռնատափաստանային գոտիներում. հաճախ է հանդիպում ճամփեզրերին, վարելահողերի վրա, խաղողի և մրգատու այգիներում:

Կաթնբեկ բանջարանոցայինը միամյա խոտաբույս է, որը հաճախ է հանդիպում արմատապտուղների ցանքերում: Պարարտ ռոռովող հողերի վրա բույսը՝ ինքնացան եղանակով շատ արագ բազմանում է: Բուսահնէաբանները կարծում են, որ հնում բույսը լայնորեն օգտագործվել է սննդի մեջ:

Այլ է իրավիճակը կաթնբեկ դաշտայինի դեպքում, որը



հողը վարելուց հետո, կարող է գրավել շատ մեծ տարածքներ, քանի որ նույնիսկ մասնատված արմատները և ցողունի մասերը շատ արագ նոր արմատային ծիլեր են տալիս, որոնք պատրաստ են ձմեռելու: Կաթնբեկ բանջարանոցայինի ցողունն ուղղաձիգ է, բարձրությունը՝ 10-100 սմ, տերևները նստադիր են, խորը կտրտված և սուր զագաթով:

Ծաղիկները լեզվակավոր են, դեղին գույնի, հավաքված են վահանաձև ծաղկաբույլերի մեջ: Ծաղկման շրջանը բավականին երկար է՝ հունիս-սեպտեմբեր: Բոլոր կաթնբեկները մեղրատու բույսեր են, 1 հա-ից մեղրատվությունը հասնում է 120 կգ-ի: Մեղրը բաց դեղին է, նուրբ բուրմունքով, համեղ: Կաթնբեկ բանջարանոցայինն օգտագործվում է ժողովրդական բժշկության մեջ: Վերգետնյա մասը հավաքում են ծաղկման շրջանում՝ չորացնելով օդափոխվող ծածկի տակ: Պարունակում է զգալի քանակությամբ վիտամին A, դաբաղանյութ և չնչին քանակությամբ կաուչուկ:

Advertisement for Agronews 2015 subscription. Includes a table with subscription rates for different regions and contact information for the publisher.